Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի
2013 թվականի ապրիլի 29-ի թիվ 102-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2013թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2012 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը, «Հանձնաժողովի 2012 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը: Հանձնաժողովը 2012 թվականին շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների բացահայտմանը, կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելուն: Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել նաև իր գործունեության հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման, պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Թվինինգ ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունման և կատարելագործման ուղղություններով:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովի կողմից 2012 թվականին աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման հնարավոր դեպքերի քննարկման և որոշումների ընդունման, ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղություններով:

Մասնավորապես, իրականացվել են մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն, որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանցում մասնակից տնտեսվարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը, ուսումնասիրվել են սննդամթերքի, բենզինի, դիզելային վառելիքի, սալիկների և սանիտարական տեխնիկայի մանրածախ իրացում իրականացնող առևտրային ցանցերի գործունեությունը, ինչպես նաև մի շարք դեղատնային ցանցերի գործունեությունը:

Հանձնաժողովի կողմից իրականացվող մշտական դիտանցումներին զուգահեռ՝ որոշակի պարբերականությամբ և ընտրանքային կարգով դիտանցումներ են իրականացվել առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքային շուկաներում՝ ձևավորվող գնային միտումների մասին օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Դիտանցումներն իրականացվել են երկօրյա դիտանցման ենթակա 28

ապրանքային խմբի շուրջ 121 ապրանքատեսակների և ամենամսյա դիտանցման ենթակա 12 ապրանքային խմբի 46 ապրանքատեսակների նկատմամբ: Դիտանցումներն իրականացվել են Երևան քաղաքում ընդհանուր հարկման ռեժիմում գործող մանրածախ և մեծածախ առևտրի առավել խոշոր օբյեկտներում: Դիտանցումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը ոչ միայն զետեղվել է Հանձնաժողովի տվյալների բազայում, այլ նաև տրամադրվել է պետական մարմիններին, այդ կերպ հնարավորություն տալով ամենօրյա հսկողության տակ պահել ցանցային վաճառակետերում իրացվող, ինչպես նաև մատակարար տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների գները: Օրենքի հնարավոր խախտումների առնչությամբ փաստական ապացույցներ ձեռքբերելու նպատակով, տարբեր վաճառակետերում իրականացվել են հսկիչ գնումներ և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում իր ուշադրությունն առավել կենտրոնացրել է սոցիալական ոլորտի մրցակցային խնդիրներին: Մի շարք վարչական վարույթներ են հարուցվել պետական գնումների կազմակերպման գործընթացում հնարավոր շուկայի մուտքի խոչընդոտների, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից դիրքի չարաշահման, տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ և կիրառել է պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում բացահայտել է անբարեխիղճ մրցակցության դրսևորումների մի շարք դեպքեր, որոնց առնչությամբ հանձնարարվել են տնտեսվարող սուբյեկտներին՝ դադարեցնել և հետագայում բացառել անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերը: Անբարեխիղճ մրցակցության, սպառողներին մոլորության և շփոթության մեջ գցելու (այլ տնտեսվարող սուբյեկտին պատկանող ապրանքային նշանի օգտագործում կամ նմանակում, պարտադիր մակնշման բացակայություն, օրենսդրությանը հակասող/թերի մակնշում) դեպքեր են արձանագրվել առաջին անհրաժեշտության ապրանքների շրջանառության ոլորտներում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 22 ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրություն՝ 21-ը պարենային, 1-ը՝ ոչ պարենային: Ուսումնասիրված 22 ապրանքային շուկաներից 10-ը բարձր կենտրոնացված են, 11-ը՝ միջին կենտրոնացված, 1-ը՝ ցածր կենտրոնացված: Ապրանքային շուկաներից 12-ում առկա է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, իսկ մյուս 10 ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա: Ընդ որում, վերոնշյալ 12 ապրանքային շուկաներից 11-ում առկա են համատեղ գերիշխողներ, այդ թվում 9 ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվել՝ միասին գրավելով տվյալ ապրանքային շուկայի մեկ երկրորդը, իսկ մյուս 2 շուկաներում՝ միասին գրավելով տվյալ շուկայի երկու երրորդը:

Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների շրջանակներում իրականացվել են դեղերի և դեղամիջոցների ոլորտին առնչվող ևս 3 ապրանքային շուկաների ուսումնասիրություն:

Միաժամանակ, Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում շուրջ 17 ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի ուսումնասիրության նպատակով պարզել է այդ շուկաներում ապրանքների ինքնարժեքի ձևավորման և վաճառքի գների, իրացման ոլորտում եկամտաբերության օպտիմալ և փաստացի մակարդակների ազդեցությունն ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա:

Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում ընդունել է 630 որոշում: Հարուցել է շուրջ 271 վարչական վարույթ՝ որից 194-ը Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ, իսկ 77-ը հարուցվել են համապատասխան դիմումների հիման վրա: Հանձնաժողովի կողմից ընդունվել է 187 պատասխանատվության միջոցներ սահմանող որոշումներ շուրջ 210 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Ընդունված պատասխանատվության միջոցների 187 որոշումներից 57-ը առնչվում են անբարեխիղճ մրցակցությանը, 5-ը՝ գերիշխող դիրքի չարաշահմանը, 5-ը՝ հակամրցակցային համաձայնություններին, 3-ը համակենտրոնացումներին: Օրենքի խախտման համար շուրջ 60 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է առավելագույն պատժաչափ՝ տուգանք, իսկ շուրջ 150 տնտեսվարողի նկատմամբ՝ նախազգուշացում: Հանձնաժողովի որոշումներով նշանակված տուգանքների գումարը կազմել է 274 մլն դրամ: Մասնավորապես, 130 մլն դրամ գերիշխող դիրքի չարաշահման երևույթների, 110 մլն դրամ բացահայտված անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, 30 մլն դրամ հակամրցակցային համաձայնությունների և 4 մլն դրամ Հանձնաժողովի կողմից պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար: Ի դեպ, վերը նշված ցուցանիշների մեջ ներառված չեն 2012 թվականի ուսումնասիրություններով բուժհաստատությունների և մանկապարտեզների պետական գնումների ոլորտում շուրջ երկու հարյուր տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ դեպքերը, քանի որ գործերում բացահայտված փաստերը՝ լինելով Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներից դուրս, ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովը իրականացրել է մեծածավալ աշխատանք համակենտրոնացումների կարգավորման ուղղությամբ, ինչը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը: Ի դեպ, վերջին տարիներին զգալիորեն աճել է համակենտրոնացումներին առնչվող վարչական վարույթների թիվը, ինչը պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցության բարձրացմամբ և Հանձնաժողովի գործունեության ակտիվ լուսաբանմամբ: Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ Օրենքի հնարավոր խախտումների՝ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումների և այլ միավորումների վերաբերյալ: Համակենտրոնացումների մասով մրցակցային օրենսդրության կիրարկման արդյունքում, 2012 թվականի ընթացքում Հանձնաժողովը կայացրել է ընկերությունների համակենտրոնացումներին առնչվող շուրջ 45 որոշում: Ընկերությունների կողմից չհայտարարագրված

համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար Հանձնաժողովն ընդունել է պատասխանատվության միջոցի կիրառման 3 որոշում՝ ընկերությունների նկատմամբ սահմանելով նախազգուշացում: Նույն ժամանակահատվածում ընդունվել է համակենտրոնցումների թույլտվության թվով 11 որոշումներ և ընկերություններին անձանց խումբ համարելու 24 որոշում:

2012 թվականի ընթացքում Հանձնաժողովից առաքվել է շուրջ 3660 գրություն, մուտք է եղել շուրջ 5300 գրություն:

Համեմատելով 2008-2012 թվականների Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները կարելի է փաստել, որ, եթե 2008 և 2009 թվականներին Հանձնաժողովը կայացրել էր տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու 31 որոշում, 2010 թվականին այդ ցուցանիշը կազմել է 107 որոշում, 2011 թվականին՝ 197 որոշում, իսկ 2012 թվականին՝ 187 որոշում: Ինչ վերաբերում է կիրառված ֆինանսական տուգանքների բացարձակ մեծություններին, ապա 2012 թվականին տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործողությունների համար տուգանվել են 274 միլիոն դրամի չափով, 2011 թվականին՝ 350 միլիոն դրամի չափով, 2010-ի՝ 37 միլիոնի, 2009-ի՝ 10 միլիոնի և 2008-ի՝ 9 միլիոնի համեմատ: Հատկանշական է, որ, ի տարբերություն նախորդ տարիների, Հանձնաժողովը 2010, 2011 և 2012 թվականներին կայացված և դատական կարգով բողոքարկված որոշումներից և ոչ մեկը վերջնական դատական ակտով անվավեր չի ճանաչվել, ինչը վկայում է կայացված որոշումների հիմնավորվածության մասին: Մասնավորապես, 2010 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 28 որոշում, որոնցից բոլորով առկա է Հանձնաժողովի օգտին կայացված դատական ակտ, 2011 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 20 որոշում, որոնցից 14-ով դատարանը վճիռ է կայացրել Հանձնաժողովի օգտին, իսկ 2012 թվականի բողոքարկվել է 10 վարչական ակտ, որոնցից 3-ով որոշում է կայացվել Հանձնաժողովի օգտին, իսկ մնացած գործերով դատավարությունը շարունակվում է: Հանձնաժողովի որոշումների կատարման նպատակով 3 հայցադիմում Հանձնաժողովի կողմից է ներկայացվել դատարան:

Հանձնաժողովը 2012 թվականին շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Կազմակերպվել են մի շարք մամլո ասուլիսներ, տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող հարցերով բազմաթիվ հարցազրույցներ: Հանձնաժողովն ակտիվացրել է մրցակցային օրենսդրության քարոզչությունը՝ անցկացնելով մի շարք քննարկումներ: Սպառողների տարբեր լսարաններում քննարկվել են հասարակությանը հուզող հարցեր՝ կապված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը բարելավելու խնդրի հետ:

Դրա հետ մեկտեղ Հանձնաժողովը շարունակել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ սերտ համագործակցությունը: Հանձնաժողովը 2012 թվականին հաստատել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ: Շարունակվել են Թվինինգ ծրագրի շրջանակներում ընթացիկ աշխատանքները: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել են սեմինարներ

Հայաստանի Հանրապետության մարզերում մրցակցության օրենսդրության վերաբերող հարցերի շուրջ:

Շուրջ երկու տարի Հանձնաժողովը ԵՄ Թվինինգ ծրագրի հետ համագործակցության շրջանակում իրականացրել է տարբեր ծրագրեր՝ Հայաստանում մրցակցային դաշտի բարելավման ուղղությամբ: Ծրագիրն ակնհայտորեն նպաստել է հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: ԵՄ փորձագետների մասնակցությամբ իրականացված օրենսդրական բարեփոխումների, համատեղ վարույթների, ինչպես նաև դատարաններում առկա գործերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրման շնորհիվ էականորեն բարձրացել է Հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը: Ծրագրի շրջանակում կատարվել է ևս մի էական քայլ՝ մրցակցային օրենսդրության կարգավորման բնագավառում: Հայաստանի օրենսդրությունը բարելավելու և այն ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով Հանձնաժողովը ԵՄ Թվինինգ ծրագրի փորձագետների աջակցությամբ մշակել է Օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծեր և ներկայացրել է դրանք ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել և հրապարակվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Մշտապես Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է գտնվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը: Վերջինների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա իրականացվել է վերջինների գործունեության վերահսկողություն: Մասնավորապես, Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են եղել 55 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող 61 տնտեսվարող սուբյեկտ, ոչ պարենային 68 ապրանքային շուկաներում գործող 43 տնտեսվարող սուբյեկտ, դեղերի 16 շուկաներում գործող 10 տնտեսվարող սուբյեկտ: Բացի այդ, նմանատիպ հսկողություն է իրականացվել գերիշխող դիրք ունեցող 6 պարենային ապրանքների առևտրային ցանցերի, 5 բենզալցակայանների ցանցերի, 9 դեղատների ցանցերի և 4 սալիկների ու սանիտարական տեխնիկայի առևտրային ցանցերի նկատմամբ: Վերը նշված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում է մշտական հսկողություն վերջիններիս կողմից մրցակցության օրենսդրության խախտումների կանխարգելման և դադարեցման ուղղությամբ, հիմնականում մանրածախ գների հիմնավորվածության առումով:

2012 թվականի դեկտեմբերին հաստատվել են Հանձնաժողովի ներքին աուդիտի կանոնակարգը, ներքին աուդիտի ենթակա միավորների ցանկը, ընդհանուր միջավայրի ստուգաթերթը, ռիսկերի գնահատման տեղեկագիրը և ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները: Հաստատվել է Հանձնաժողովի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը, ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, Հանձնաժողովում ներդրվել է ներքին աուդիտի միասնական էլեկտրոնային համակարգը:

Հանձնաժողովի կողմից 2012 թվականի ընթացքում հայտարարվել և անց են կացվել քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնելու 1 և գլխավոր պաշտոններ զբաղեցնելու 3 մրցույթ: Ատեստավորվել են աշխատակազմի 4 և

վերապատրաստվել են 5 քաղաքացիական ծառայողներ: Հանձնաժողովի շուրջ 22 աշխատակիցներ տարվա ընթացքում մասնակցել են արտերկրում կազմակերպված շուրջ 17 սեմինարների, փորձի փոխանակման և ուսումնական այցերի:

Համաձայն 2012-2013 թվականների մրցունակության մասին Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի, որը ներկայացնում է մրցունակության առավել ճշգրիտ և ամբողջական գնահատականն աշխարհում՝ մշտապես գտնվելով միջազգային կազմակերպությունների, բիզնես շրջանակների, միջազգային առևտուր իրականացնողների ուշադրության կենտրոնում, Հայաստանի Հանրապետությունը բարելավել է իր ցուցանիշները նախորդ տարվա ցուցանիշների նկատմամբ՝ 144 պետությունների շարքում բարձրացրել է մրցունակության իր դիրքը 10 կետով, զբաղեցնելով 82-րդ տեղը: Մասնավորապես, շուկայում գերիշխող ուժերի ազդեցության ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքը 43 կետով, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով բարելավել է իր դիրքը 22 կետով և տեղական մրցակցության ինտենսիվության ցուցանիշով բարելավել է իր դիրքը 9 կետով:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանձնաժողովը, 2012 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարվելու փաստերը և այլ հանգամանքներ:

Աղյուսակ 1

2012 թվականի ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկայի մասնակիցների, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը և շուկայի կենտրոնացվածության աստիճանը

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայի մասնակից ների թիվը	Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը* և դրա բնութագրումը	
1	2	3	4	5	6
1	«Երշիկեղեն»	43	-	46.07	միջին
2	«Բնական հյութեր»	56	-	51.37	միջին
3	«Գարեջուր»	21	3	78.88	բարձր
4	«Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)»	41	-	53.5	միջին
5	«Մակարոնեղեն»	95	-	34.2	ցածր
6	«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	28	2	69.82	միջին
7	«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	18	2	92.53	բարձր
8	«Մսի պահածո»	22	2	84.7	բարձր
9	«Մարինացված պահածո»	56	-	45.8	միջին
10	«Ձկան պահածո»	26	-	59.6	միջին
11	«Մրգային պահածո»	56	-	46.5	միջին
12	«Թեյ»	50	-	51.8	միջին
13	«Շոկոլադե սալիկ»	28	2	70.6	բարձր
14	«Շոկոլադե բատոն»	10	1	92.1	բարձր
15	«Շոկոլադե դրաժե»	9	2	94.67	բարձր
16	«Շոկոլադե մածուկ»	15	3	72.17	բարձր
17	«Շոկոլադե կոնֆետներ»	45	3	82.46	բարձր
18	«Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)»	17	2	83.64	բարձր
19	«Օղի»	42	-	47,74	միջին
20	«Տոմատի մածուկ»	28	2	84.2	բարձր
21	«Սուրճ»	47	3	67.57	միջին
22	«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»	40	-	62.5	միջին

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% < CR-3 < 100%, միջին աստիճան՝ եթե 45% < CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

«Երշիկեղեն» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա: Նշված ժամանակահատվածում արտադրվել է 2507.5 տոննա, ներկրվել է 75.8 տոննա, արտահանվել 202.3 տոննա երշիկեղեն: Իրացման ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 2363.1 տոննա:

«Երշիկեղեն» ապրանքային շուկայում 2011 թվականին «Մուշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Աթենք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Բեկոն Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժինները կազմել են համապատասխանաբար 19.59 տոկոս, 13.98 տոկոս և 12.50 տոկոս: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 46.07 տոկոս:

«Բնական հյութեր» ապրանքային շուկայում գործող թվով 56 տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության համաձայն 2011 թվականին ներկրվել է 9999.1 հազ.լիտր, արտադրվել է 16412.6 հազ.լիտր և արտահանվել է 3388.3 հազ.լիտր բնական հյութ: Շուկայի իրացման ծավալը կազմել է 23878.9 հազ.լիտր:

«Բնական հյութեր» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ադամյում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 21.14 տոկոս, «Կոկա Կոլա ՀԲՔ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 16.75 տոկոս և «Սիս Նատուրալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13.48 տոկոս բաժիններով:

Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 51.37 տոկոս:

«Գարեջուր» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա: Նշված ժամանակահատվածում արտադրվել է 15030.6 հազ.լիտր, ներկրվել է 3315.2 հազ.լիտր և արտահանվել է 1741.3 հազ.լիտր գարեջուր: Շուկայի իրացման ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 16273.4 հազ.լիտր գարեջուր:

Իրացման ծավալներով առաջատար են «Երևանի Գարեջուր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 46.78 տոկոս, «Գյումրի Գարեջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18.28 տոկոս և ««Կոտայք» Գարեջրի Գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13.82 տոկոս բաժիններով: «Գարեջուր» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող նշված երեք տնտեսվարող սուբյեկտներն իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը (78.88 տոկոս) և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան բարձր կենտրոնացված է:

«Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)» ապրանքային շուկայի արտադրության ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 11504.7 հազ.լիտր, ներկրման ծավալը՝ 501.4 հազ.լիտր և արտահանման ծավալը՝ 809.3 հազ.լիտր: Հայաստանի Հանրապետությունում իրացման ընդհանուր ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 3688.1 հազ.լիտր գինի:

Իրացման ծավալներով առաջատար են «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 22.60 տոկոս, «Վեդի ալկո» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 16.68 տոկոս և «Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 14.22 տոկոս բաժիններով:

«Գինի (բացի աճխաթթու պարունակողներից)» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 53.5 տոկոս:

«Մակարոնեղեն» ապրանքային շուկայի ներկրման ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 3853.2 տոննա, արտադրության ծավալը՝ 3300.4 տոննա, իսկ արտահանման ծավալը՝ 20.5 տոննա: 2011 թվականի ընթացքում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 7108.7 տոննա մակարոնեղեն:

Իրացման ծավալներով առաջատար են «ԷյէյէՖփիսի» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 15.8 տոկոս, «Ջի Էյջ Սթորիջ Էնթերփրայզս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 9.3 տոկոս և «Թալգրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 9.2 տոկոս բաժնեմասով: «Մակարոնեղեն» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության ցածր աստիճան՝ 34.2 տոկոս:

«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 11338.7 հազ.լիտր և արտահանվել է 9189.2 հազ.լիտր կոնյակ: Այդ նույն ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 1857.3 հազ.լիտր:

«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 50.09 տոկոս, «Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 11.38 տոկոս և «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 8.35 տոկոս բաժնով: Շուկան միջին կենտրոնացված է՝ 69.82 տոկոս կենտրոնացվածության աստիճանով:

Իրացման ծավալներով առաջատար «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և «Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը (61.47 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա:

Ներկայացված տեղեկատվության համաձայն 2011 թվականի ընթացքում արտադրության ծավալը կազմել է 3144.0 հազ.լիտր և արտահանման ծավալը՝ 2878.7 հազ.լիտր: Հայաստանի Հանրապետությունում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 272.7 հազ.լիտր կոնյակ:

Իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 61.66 տոկոս, «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունը՝ 21.09 տոկոս և «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 9.78 տոկոս բաժնով:

«Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական և «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունները իրացման

ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (82.75 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան՝ 92.53 տոկոս:

«Մսի պահածո» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 260.6 տոննա, ներկրվել է 45.6 տոննա և արտահանվել է 71.8 տոննա մսի պահածո: Շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների իրացման ընդհանուր ծավալը կազմել է 253.3 տոննա:

«Մսի պահածո» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Գեղարդ» արտադրական կոոպերատիվը՝ 57.6 տոկոս, «Արմեն-Համիկ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19.7 տոկոս և «Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 7.4 տոկոս բաժնով: Շուկան բարձր կենտրոնացված է՝ 84.7 տոկոս կենտրոնացվածության աստիճանով:

Իրացման ծավալներով առաջատար «Գեղարդ» արտադրական կոոպերատիվը և «Արմեն-Համիկ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Մսի պահածո» ապրանքային շուկայում միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը (77.3 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Մարինացված պահածո» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 962.6 տոննա, արտադրվել է 908.6 տոննա և արտահանվել է 298.1 տոննա մարինացված պահածո: Տվյալ շուկայում իրացման ծավալը կազմել է 1359.4 տոննա:

Իրացման ծավալներով առաջատար են «Արտաշատի պահածոների գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 18.35 տոկոս, «Վեգեքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 17.98 տոկոս և «ՄԱՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 9.47 տոկոս բաժնեմասով:

«Մարինացված պահածո» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 45.8 տոկոս:

«Ձկան պահածո» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում թվով 26 տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրվել 953.8 տոննա ձկան պահածո: Նույն ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 743.4 տոննա:

«Ձկան պահածո» ապրանքային շուկայում 2011 թվականի տվյալներով իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Պոլիտան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 23.6 տոկոս, «Կարդինալ Ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18.6 տոկոս և «Խապե Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 17.4 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 59.6 տոկոս:

«Մրգային պահածո» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա: Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 1676.6 տոննա, ներկրվել է 25.3 տոննա և արտահանվել է 1049.4 տոննա մրգային պահածո: Այդ ժամանակահատվածում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 222.7 տոննա:

Իրացման ծավալներով առաջատար են «Մեղրու պահածոների գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը, որը զբաղեցնում է շուկայի ընդհանուր ծավալի 24.7 տոկոսը, «Ալիշան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 12.9 տոկոսը և «Թամարա ֆրութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 8.9 տոկոսը: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 46.5 տոկոս:

«Թեյ» ապրանքային շուկայում գործող 50 տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր իրացման ծավալը 2011 թվականի ընթացքում կազմել է 302.9 տոննա: Այդ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 301.6 տոննա թեյ:

Իրացման ծավալներով առաջատար են «Էսթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը զբաղեցնում է շուկայի ընդհանուր ծավալի 20.3 տոկոսը, «Մելիքա ՋՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18.1 տոկոսը և «Սովռանո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13.4 տոկոսը: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 51.8 տոկոս:

«Շոկոլադե սալիկ» ապրանքային շուկայում գործող 28 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 386.63 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 325.54 տոննա, արտադրվել է 46.09 տոննա շոկոլադե սալիկ:

«Շոկոլադե սալիկ» ապրանքային շուկայում 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջատար երկու տնտեսվարող սուբյեկտներ՝ «Մարսերալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 46.36 տոկոս և «Նյու Ֆորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16.70 տոկոս, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (63.06 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան՝ 70.6 տոկոս:

«Շոկոլադե բատոն» ապրանքային շուկայում գործող 10 տնտեսվարող սուբյեկտների իրացման ընդհանուր ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 507.81 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 530.22 տոննա, արտադրվել է 14.18 տոննա շոկոլադե բատոն:

«Շոկոլադե բատոն» ապրանքային շուկայում 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջատար է ««Դերժավա-Ս» և «Սլավ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություններ» անձանց խումբը 92.1 տոկոսով: Իրացման ծավալներով գրավում է տվյալ ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը և համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան բարձր կենտրոնացված է:

«Շոկոլադե դրաժե» ապրանքային շուկայում գործող 9 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 110.14 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 64.67 տոննա, արտադրվել՝ 47.29 տոննա շոկոլադե դրաժե:

«Շոկոլադե դրաժե» ապրանքային շուկայում 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջատար երկու տնտեսվարող սուբյեկտներ՝ «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 57.15 տոկոս և ««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 29.91 տոկոս, իրացման ծավալներով միասին

գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (87.06 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան՝ 94.67 տոկոս:

«Շոկոլադե մածուկ» ապրանքային շուկայում գործող 15 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 106.44 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 83.48 տոննա, արտադրվել է 26.84 տոննա շոկոլադե մածուկ:

«Շոկոլադե մածուկ» ապրանքային շուկայում իրացման ծավալներով երեք առաջատար տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Սլավ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 36.46 տոկոս, ««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19.00 տոկոս և «Սովռանո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16.72 տոկոս, որոնք իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի առնվազն երկու երրորդը (72.17 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Շոկոլադե կոնֆետներ» ապրանքային շուկայում գործող 45 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 1450.0 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 1100.0 տոննա, արտադրվել է 700.0 տոննա շոկոլադե կոնֆետներ:

«Շոկոլադե կոնֆետներ» ապրանքային շուկայում իրացման ծավալներով երեք առաջատար տնտեսվարող սուբյեկտներ՝ ««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 39.80 տոկոս, «Սովռանո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 23.38 տոկոս և «Ապեյրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19.27 տոկոս, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի առնվազն երկու երրորդը (82.46 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)» ապրանքային շուկայում գործող 17 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կազմել է 371.5 տոննա: Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 79.92 տոննա:

«Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)» ապրանքային շուկայում 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջատար երկու տնտեսվարող սուբյեկտներ՝ ««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 60.90 տոկոս և «Սովռանո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 17.23 տոկոս, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (78.13 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան՝ 83.64 տոկոս:

«Օղի» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա: «Օղի» ապրանքային շուկայում գործունեություն են իրականացրել 42 տնտեսվարող սուբյեկտ: 2011 թվականի տվյալներով օղու ներկրման ծավալը կազմել է 3264.07 հազ.լիտր, արտադրության ծավալը՝ 6736.07 հազ.լիտր,

արտահանման ծավալը՝ 706.00 հազ.լիտր: Նշված ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 13932.30 հազ.լիտր:

«Օղի» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18,97 տոկոս բաժնով, «Սարգիս Կառոլինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18,53 տոկոս բաժնով, և «Արմենիա վայն գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,24 տոկոս բաժնով: «Օղի» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան, որտեղ վերոնշյալ երեք ընկերությունների բաժինները միասին կազմում է 47,74 տոկոս:

«Տոմատի մածուկ» ապրանքային շուկայի մասնակից են հանդիսանում 28 տնտեսվարող սուբյեկտ, որոնց կողմից 2011 թվականի տվյալներով ներկրվել է 10.72 տոննա տոմատի մածուկ, արտադրության ծավալը կազմել է 4227.80 տոննա, արտահանման ծավալը՝ 636.84 տոննա: «Տոմատի մածուկ» ապրանքային շուկայում իրացման ծավալը կազմել է 1245.38 տոննա:

2011 թվականի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են «Արտաշատի պահածոների գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 54,3 տոկոս բաժնով, «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 23,6 տոկոս բաժնով և «Հայաստանի «Բորոդինո» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 6,3 տոկոս բաժնով:

«Տոմատի մածուկ» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, որտեղ վերոնշյալ երեք ընկերությունների բաժինները միասին կազմում է 84,2 տոկոս:

«Արտաշատի պահածոների գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը և «ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերությունը միասին իրացման ծավալներով գրավում են «Տոմատի մածուկ» ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը՝ 77,9 տոկոսը և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Սուրճ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թվականի առաջին կիսամյակի տվյալների հիման վրա: Շուկայի մասնակից են հանդիսանում 47 տնտեսվարող սուբյեկտ: 2012 թվականի առաջին կիսամյակում սուրճի ներկրման ծավալը կազմել է 5100.39 տոննա, արտադրության ծավալը՝ 4308.45 տոննա, արտահանման ծավալը՝ 481.40 տոննա: Նույն ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 3651.04 տոննա սուրճ:

«Սուրճ» ապրանքային շուկայում 2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են «Կաֆե դյու Բրազիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 42,07 տոկոս բաժնով, «Գրանդ Քենդի» հայ-կանադական Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 13,72 տոկոս բաժնով, և «Կարդինալ Ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 11,78 տոկոս բաժնով և իրացման ծավալներով միասին գրավում են շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 67,57 տոկոսը և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Սուրճ» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 67,57 տոկոս:

«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի» ապրանքային շուկայում գործող թվով 40 տնտեսվարող սուբյեկտների կողմից 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 1740.0 հազար.քմ և իրացվել է 1681.7 հազար.քմ ապակի:

«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Ֆուրնիֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 24.4 տոկոս, «ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 21.8 տոկոս և «Շին Գլասս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 16.3 տոկոս: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան՝ 62.5 տոկոս:

Գծապատկեր 1-ում բերված է ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի կախվածությունը շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թվից: Ինչպես երևում է, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների թվի նվազումը ուղեկցվում է ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի աճով: Գծապատկեր 2-ում բերված է մի շարք ապրանքային շուկաների մասնակիցների, արտադրողների և ներկրողների թվերի դիագրամը:

Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի կախվածությունը շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թվից

Գծապատկեր 1




Ապրանքային շուկայի մասնակիցների, արտադրողների և ներկրողների թիվը
100
90
80
70
60
50
40
30
20
10
0
43
32
11
56
21
35
21
6
15
41
27
14
95
49
46
28
28
0
18
18
0
22
4
18
56
25
31
26
0
26
56
25
31
50
0
50
28
17
11
42
24
18
47
0
44
40
0
40
«Երշիկներն»
«Բանան հյութեր»
«Գարեջուր»
«Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)»
«Մանարոններն»
«Մինչև հինգ տարի հնեցմամբ կոնյակներ»
«Հինգ տարուց ավելի հնեցմամբ կոնյակներ»
«Մսի պահածո»
«Մարինացված պահածո»
«Ձկան պահածո»
«Մրգային պահածո»
«Թեյ»
«Տոմատի մածուկ»
«Օղի»
«Սուրճ»
«Ապակի»
Ընդամենը
Արտադրող
Ներկրող

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հանձնաժողովն իրականացրել է մի շարք միջոցառումներ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների հայտնաբերման և վերացման նպատակով, ինչպես նաև նախաձեռնել է Օրենքով սահմանված կանխարգելիչ գործողություններ մի շարք ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության վերահսկման գործընթացի շրջանակներում:

Հանձնաժողովը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012 թվականին իր գործողությունները նպատակաուղղել է վերահսկելու հատկապես կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը: Մշտական վերահսկողություն է իրականացրել ոչ միայն ապրանքների արտադրությամբ, ներկրմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարողների, այլ նաև խոշոր առևտրային ցանցերի վարքագծի նկատմամբ: Հանձնաժողովը պարբերաբար իրականացրել է դիտանցում՝ վերահսկելով գների փոփոխությունները, ինչպես նաև բացահայտել է սպառողներին մոլորեցնելուն ուղղված գործողություններ: Տարվա ընթացքում Հանձնաժողովը հայտնաբերել է մրցակցության օրենսդրության մի շարք խախտումներ, որոնց արդյունքում հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել համապատասխան պատասխանատվության միջոցներ:

Այսպես, Հանձնաժողովը 2012 թվականի առաջին եռամսյակում «Ազոտական պարարտանյութեր» ապրանքային շուկայում հարուցել է վարչական վարույթ, որի արդյունքում ամրագրել է, որ ազոտական պարարտանյութերի շուկայում գործող «Քեթրին գրուպ» ընկերությունը չարաշահել է գերիշխող դիրքը: Այս առնչությամբ Հանձնաժողովն ընկերությունից պահանջել է հիմնավորումներ՝ գնային փոփոխությունների վերաբերյալ: Ընդ որում, այս շուկայի մյուս երկու գերիշխողները («Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ և «Մասիսի բերրիություն» ՍՊԸ), գնային որևէ փոփոխություն չեն իրականացրել: Ըստ «Քեթրին գրուպ» ընկերությունից ստացված պարզաբանումների, տեղի է ունեցել ապրանքի ձեռքբերման գնի աճ, ինչպես նաև գնի վրա ազդել են լրացուցիչ տրանսպորտային ծախսեր: Սակայն, նշվածներից և որևէ մեկը փաստաթղթերով չի հիմնավորվել: Բացի այդ, Հանձնաժողովը ստուգումների միջոցով պարզել է, որ այն ժամանակահատվածում, երբ պարարտանյութը վաճառվել է բարձր արժեքով, «Քեթրին գրուպ» ընկերությունը ներմուծում չի իրականացրել, այլ վաճառել է պահեստում առկա մնացորդները, որոնք ձեռք էր բերել ավելի ցածր գնով: Հանձնաժողովի որոշմամբ «Քեթրին Գրուպ» ընկերության նկատմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվել է տուգանք հինգ միլիոն դրամի չափով: Միաժամանակ, «Քեթրին Գրուպ» ընկերությունից հօգուտ պետական բյուջե է գանձվել 2011 թվականի հուլիս ամսվա ընթացքում ազոտական պարարտանյութերի վաճառքի գների չհիմնավորված բարձրացման միջոցով ընկերության ստացված լրացուցիչ շահույթը՝ հինգ միլիոն յոթանասունյոթ հազար երեք հարյուր երեսունվեց դրամի չափով:

Հանձնաժողովը դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ՝ դեղերի ոլորտում պետական գնումների կազմակերպման ընթացքում շուկայի մուտքի

հնարավոր խոչընդոտների վերաբերյալ: Հարուցված վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրվել են ոչ միայն բողոքին առնչվող փաստերը, այլ նաև վերջին տարիների ընթացքում իրականացված մրցույթների գործընթացին վերաբերող փաստաթղթերը, որի արդյունքում Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են Օրենքին հակասող գործողություններ, որոնք կրել են հակամրցակցային բնույթ: Մասնավորապես, մի շարք բուժհաստատություններ, խախտելով պետական գնումների մասին օրենքի պահանջը, դեղորայք են ձեռքբերել առանց մրցույթ հայտարարելու, կամ այդ մրցույթները կրել են ձևական բնույթ: Բացի այդ, հայտնաբերվել են դեպքեր, երբ մրցույթին մասնակցած և պարտված ընկերությունը բուժհաստատությանը կատարել է նվիրատվություն, որի արդյունքում խաթարվել է մրցութային գործընթացը և բուժհաստատությունը, գնման պահանջի վերացման պատճառաբանությամբ, պայմանագիր չի կնքել մրցույթում հաղթող ճանաչված տնտեսվարող սուբյեկտի հետ: Հանձնաժողովը հակամրցակցային է դիտարկել նման գործողությունները: «Նատալի ֆարմ» ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ ընդհանուր 50 միլիոն դրամի չափով և պարտադրվել է, որպեսզի ընկերությունը վերացնի և հետագայում բացառի նման վարքագիծը: Վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովը, բացի «Նատալի ֆարմ» ընկերությունից, ևս այլ 8 տնտեսվարողների և շուրջ երեք տասնյակ բուժհաստատությունների գործողությունները դիտարկել է որպես համամրցակցային գործողություններ՝ կիրառելով նախազգուշացում ու զգուշացում և հանձնարարելով հետագայում ձեռնպահ մնալ նման վարքագծի դրսևորումից:

Ուսումնասիրության ընթացքում որոշ խնդիրներ են առաջացել նաև օրենսդրության անկատարության հետևանքով: Պետական գնումների մասին օրենսդրության ոլորտում առկա սողանցքները փակելու և այս ոլորտի օրենսդրությունը բարելավելու նպատակով, Հանձնաժողովը մի շարք օրենսդրական առաջարկներ է մշակել, որոնք տրամադրվել են համապատասխան պետական մարմիններին:

Մրցակցության զարգացման կարևոր հիմնախնդիր է նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար հավասար պայմանների ստեղծումը: Թեկուզև Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում նվազեցվել են մուտքի, վարչական և նմանատիպ այլ խոչընդոտները, սակայն որոշ շուկաներում խոչընդոտները ստեղծվել են այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրել է բենզինի ներկրմամբ և իրացմամբ զբաղվող ընկերությունների, այդ թվում՝ «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերության վարքագիծը հեղուկ վառելիքի շրջանառության ոլորտում և հայտնաբերել է մրցակցության օրենքի մի շարք խախտումներ: Հանձնաժողովը պարզել է, որ, մասնավորապես ընկերության վարած գնային քաղաքականությունն ուղղված է փոքր բենզալցակայանների սնանկացմանը և վերջինների սեփականատերերը ստիպված իրենց բիզնեսը վաճառել են «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությանը:

Քանի որ ընկերությունը հանրապետությունում հանդիսանում է բենզինի և դիզելային վառելիքի խոշոր մատակարար, ապա տասնյակ ընկերություններ՝ մանրածախ շուկայի մասնակիցներ, վառելիքը ձեռք են բերում հատկապես նրանից: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերությունը սեփական մեծածախ բազաներից վառելիքն իրացնում է այն գնով, ինչ գնով որ արդեն իսկ վաճառում է վերջինիս պատկանող մանրածախ ցանցի միջոցով: Մասնավորապես, մանրածախ

շուկայի մասնակիցները՝ փոքր բենզալցակայանների տերերը, Ընկերության հետ կնքել են համատեղ օգտագործման պայմանագիր՝ իրենց պարտադրված պայմաններով: Ըստ այդ պայմանագրերի, շահույթի 98%-ը տնօրինում է «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը, իսկ մնացած 2%-ը՝ տվյալ բենզալցակայանի իրական սեփականատերը: Փաստորեն, շահագործելով այլ տնտեսվարողի հիմնադրած բիզնեսը, շահույթը գրեթե ամբողջությամբ ստացել է «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը: Հանձնաժողովի որոշմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը տուգանվել է 100 միլիոն դրամով:

Հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է նաև սպառողների շահերի պաշտպանությունը: Դա վերաբերվում է այն դեպքերին, երբ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից ծառայությունները տրամադրվում են ոչ բավարար, կամ ոչ սահմանված ժամկետում՝ ստեղծելով սպառողների համար արհեստական խոչընդոտներ:

Այսպես, Երևանի Ամիրյան 4/6 շենքի մի շարք բնակիչների և «Գրիար» ընկերության կողմից Հանձնաժողով են ներկայացվել դիմումներ, որոնցում նրանք բողոքել են իրենց թաղամասի բնակելի տներին էլեկտրամատակարարում չապահովելու համար: Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ: Հանձնաժողովը ևս մեկ վարույթ է հարուցել Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ: Մասնավորապես, Երևան քաղաքի բնակիչը Հանձնաժողով է ներկայացրել դիմում-բողոք առ այն, որ իր բնակարանը երկար ժամանակ զրկված է եղել էլեկտրաէներգիայից և դիմել է Ընկերությանն իր հետ մատակարարման պայմանագիր կնքելու խնդրանքով:

Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների ընթացքում վերոնշյալ խնդիրները լուծվել են և բնակիչները հնարավորություն է ստացել սպառել էլեկտրաէներգիա: Երկու դեպքում էլ Ընկերության վարքագիծը դիտարկվել է որպես մենաշնորհ դիրքի չարաշահում, որի համար տրվել է նախազգուշացում՝ հետագայում խախտումները բացառելու հանձնարարությամբ:

Հանձնաժողով է ստացվել բողոք «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գործունեությունից: Խոսքը վերաբերում է տոմսերի վաճառքի և դրանց հետ վերադարձի խնդիրներին: Մասնավորապես, Ընկերությունն էլեկտրոնային տոմսերի դեպքում դրանք ընդհանրապես հետ չի վերցրել, իսկ թղթայինի դեպքում՝ գանձել է տուգանք տոմսի արժեքի 15%-ի չափով: Նաև, «Հարավկովկասյան երկաթուղում» տոմսերի ձեռքբերման համակարգը այնպիսին է, որ թույլ չի տվել միաժամանակ ձեռքբերել մեկնման և հետվերադարձի տոմսերը, ինչպես նաև վագոնում ազատ տեղերի միջև ընտրություն կատարել: Բողոք է եղել նաև էլեկտրոնային տոմսերի բարձր գներից: Հարուցված վարույթի ընթացքում, ի շնորհիվ Հանձնաժողովի օպերատիվ միջամտության և բերված ծանրակշիռ փաստարկների, «Հարավկովկասյան երկաթուղին» վերոնշյալ խնդիրների հիմնական մասը լուծել է և գրավոր պարտավորություն է ստանձնել որոշակի ժամանակահատվածում շտկելու դեռևս տվյալ պահին առկա խնդիրը՝ այն է նորից իջեցնել էլեկտրոնային տոմսերի գները: Հանձնաժողովը, հաշվի առնելով ընկերության կողմից խնդիրներն արագ լուծելու փաստը, «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը տվել է զգուշացում՝ միաժամանակ հանձնարարելով հետագայում բացառել սպառողների շահերը վնասող

վարքագիծը, բացի այդ պարտավորեցնել, որպեսզի ընկերությունը բարեփոխի տոմսերի վաճառքի և վերադարձման համակարգը:

Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ դիրքը, հիմնականում, բերում է այնպիսի խախտումների, ինչպիսիք են գների չհիմնավորված բարձրացում, շուկայի մուտքի խոչընդոտների ստեղծում, կամ շուկայից դուրս մղում, կամ առանձին տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցում և այլն: Սակայն, առկա են դեպքեր, երբ մենաշնորհը, օգտվելով իր դիրքից, տրամադրում է անորակ ծառայություններ ինչպես պետական մարմիններին, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտներին և շարքային քաղաքացիներին:

Այսպես, Հանձնաժողովը դիմում-բողոքներ է ստացել մի շարք տնտեսվարողներից, ինչպես նաև քաղաքացիներից այն մասին, որ «Հայփոստը» ժամանակին և պատշաճ չի իրականացնում իր պարտավորությունները: Մասնավորապես, նամակները որոշ դեպքերում տեղ են հասնում ուշացումով և հաճախ ուղարկվում են սխալ հասցեատերերի: Վերոնշյալ խախտումները խոչընդոտում են ինչպես պետական մարմինների, այպես էլ մասնավոր ընկերությունների բնականոն աշխատանքին: Հանձնաժողովը զգուշացրել է «Հայփոստին» վերացնել խախտումները և սպառողներին մատուցել որակյալ և բարեխիղճ ծառայություններ: Հանձնաժողովը մշակել է համապատասխան օրենսդրական առաջարկներ, որոնք ուղարկվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Հանձնաժողովը, հնարավոր անբարեխիղճ մրցակցության բացահայտման նպատակով «ՄԳԱ Վոթըր» ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ «Էվրի Դեյ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացրած դիմումի հիման վրա: Դիմումում մասնավորապես նշվում է, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերությունը, սպառողին առաջարկելով խմելու մաքուր ջուր, հումքային ծագման մասին տալիս է ոչ ճիշտ և սպառողին թյուրիմացության մեջ գցող տեղեկություններ. առ այն, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերության կողմից վաճառվող «Մաքուր ջուր» ապրանքանիշի ջրի շշալցման ժամանակ օգտագործվող հումքային ջուրը վերցվում է ուղղակիորեն լեռնային աղբյուրից:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերությունն իր կողմից արտադրվող ապրանքի վրա մակնշելով «Բնական աղբյուրի խմելու ջուր» արտահայտությունը, սպառողներին գցում է մոլորության մեջ՝ ապրանքի վերաբերյալ ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, քանի որ «Բնական աղբյուրի խմելու ջուր» արտահայտությունը որևէ կերպ չի կարող արտացոլել ընկերության արտադրանքի փաստացի հատկանիշներն այն դեպքում, երբ ընկերությունն իր արտադրանքի համար հումք հանդիսացող ջուրը վերցնում է քաղաքային ջրամատակարարման ցանցից: Այսպիսով, «ՄԳԱ Վոթըր» ընկերության կողմից քաղաքային ջրամատակարարման ցանցից վերցված և վերամշակված ջուրը որպես բնական աղբյուրի ջուր իրացնելը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման):

Հաշվի առնելով, որ իրավախախտումը կատարվել է սննդամթերքի շրջանառության ոլորտում լայն սպառում ունեցող ապրանքի արտադրության

(շշալցման) և իրացման գործընթացում, ինչը մոլորության մեջ է գցել սպառողներին և փաստացի բացասական ազդեցություն է ունեցել խմելու ջրերի իրացմամբ զբաղվող այլ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցային իրավիճակի վրա՝ «ՄԳԱ Վոթըր» ընկերության նկատմամբ Օրենքի խախտման համար նշանակվել է տուգանք՝ ընկերության 2011 թվականի հասույթի մեկ տոկոսի չափով:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել նաև մանկապարտեզներում պետական գնումների շրջանակում ձեռք բերվող սննդամթերքի ոլորտում: Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որքանով են բարեխիղճ աշխատում սննդի մատակարար հանդիսացող տնտեսվարողները և որքանով է վերջիններիս գործունեությունը համապատասխանում մրցակցային օրենսդրությանը:

Վարույթի շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ տարածքում գործող 575 մանկապարտեզների գործունեությունը: Արդյունքում բացահայտվել են ոչ միայն մրցութային կանոնների խախտման, այլ նաև մատակարար ընկերությունների կողմից անբարեխիղճ վարքագծի դրսևորումներ:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բացահայտվել են մի շարք դեպքեր, երբ տնտեսվարողները մանկապարտեզների հետ կնքել են կարագի մատակարարման պայմանագիր, սակայն կարագի փոխարեն երեխաների սննդի համար տրամադրել են բուսասերուցքային խառնուրդ՝ սփրեդ, որը թե որակական և թե գնային առումով մի քանի անգամ զիջում է կարագին: Ավելին, որոշ մանկապարտեզների փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պետության կողմից երեխաների համար տրամադրված սննդի գումարով գնվել են այնպիսի ապրանքներ, որոնց օգտագործումը մանկական սննդում պարզապես անհնար է պատկերացնել: Օրինակ՝ սուրճ, բաստուրմա, սուջուխ, ձկան և մսի պահածոներ, կծու պղպեղ և այլն:

Հանձնաժողովի ուսումնասիրությունները փաստել են, որ հատկապես մարզերում, մի շարք ընկերություններ մանկապարտեզների տնօրենների փոխադարձ համաձայնությամբ սննդի մատակարար են դարձել՝ առանց մրցույթների անցկացման, ինչն օրենքի խախտում է և նպաստել է այս դաշտում անառողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը, քանի որ տասնյակ և միգուցե ավելի բարեխիղճ տնտեսվարողներ զրկվել են մրցույթներին մասնակցելու հնարավորությունից:

Մի շարք տնտեսվարողների վաճառքի փաստաթղթերից պարզվել է, որ վերջինները մանկապարտեզներին «կարագ» են մատակարարել 1000-1600 դրամով, այն դեպքում, երբ այդ նույն ժամանակահատվածում կարագի շուկայական գինը 2 անգամ ավելի թանկ է եղել, ինչը փաստել է, որ վաճառված ապրանքը կարագ չէ: Արդյունքում մրցույթի մասնակից են դարձել սփրեդի մատակարարները՝ մրցույթից դուրս մղելով կարագի մատակարարներին: Շուրջ 26 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է անբարեխիղճ մրցակցության համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցի առավելագույն չափ՝ տվյալ տնտեսվարողի տարեկան հասույթի 1%-ի չափով:

Նշենք նաև, որ Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկած խախտումները նաև օրենսդրական բացերի արդյունք են: Խոսքը մասնավորապես վերաբերում է մանկապարտեզներում երեխաների համար նախատեսված սննդի կազմակերպման կարգին, որը թերի է:

Բացի այդ, ուսումնասիրությունից պարզվել է, որ տնտեսվարողները հիմնականում ներկայացնում են միևնույն սերտիֆիկատները: Ստացվում է, որ

տնտեսվարողը կարող է ձեռք բերել ցանկացած այլ ընկերության համապատասխանության սերտիֆիկատի պատճենը և անհայտ ծագման ապրանքն իրացնել նշված փաստաթղթի ներքո: Բացի այդ, սերտիֆիկատները պարունակում են ընդհանուր բնույթի տեղեկատվություն, տրվում են երկար ժամանակահատվածով և դրանց մեջ չեն նշվում կոնկրետ ապրանքների խմբաքանակները և, ընդհանրապես այդ սերտիֆիկատներով հնարավոր չէ իդենտիֆիկացնել տվյալ ապրանքը:

Հանձնաժողովն ուսումնասիրությունների ողջ փաթեթն ուղարկել է ՀՀ Գլխավոր դատախազություն, ինչպես նաև բոլոր այն պետական մարմիններին, որոնց կարգավորման դաշտում գտնվում են վերոնշյալ խնդիրները:

Հանձնաժողովը ուսումնասիրություններ է իրականացրել «Երշիկեղենի» ապրանքային շուկայում: Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են, որ երշիկի արտադրության մեջ օգտագործվում են մեծաքանակ սոյա, օսլա, սպիտակածավար, ալյուր, նիտրիտ, ֆոսֆատ և այլն, որոնց մասին սպառողները տեղյակ չեն, քանի որ փաթեթավորման վրա նշված չեն եղել: Ուսումնասիրված գրեթե բոլոր դեպքերում վաճառքի հանված երշիկեղենի մակնշման համաձայն, երշիկի պատրաստման համար որպես հումք օգտագործվել է տավարի և խոզի բարձրորակ միս: Օրենքի համաձայն, տնտեսվարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, որը կարող է մոլորեցնել հասարակությանը նրա առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Մոլորեցում է համարվում նաև որակի, քանակի, բաղադրության կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը: Հանձնաժողովի որոշմամբ երշիկ արտադրող 21 ընկերությունների հանդեպ նշանակվել է օրենքով սահմանված առավելագույն պատժաչափ՝ ընկերությունների նախորդ տարվա հասույթի 1 տոկոսի չափով:

Հարկ է նշել, որ երշիկի մեջ սոյան օգտագործվում է հիմնականում արտադրանքին լրացուցիչ զանգված ապահովելու նպատակով, ինչի հետևանքով էլ օգտագործված մսի քանակը երբեմն հասել է նվազագույնի: Երշիկների որոշ տեսակների մեջ մսի մասնաբաժինը կազմել է ընդամենը 16 տոկոս: Սակայն մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգով սահմանված չէ, թե կոնկրետ որքան պետք է լինի այն, կամ կոնկրետ ինչ բաղադրիչներ են անթույլատրելի, որից օգտվել են վերոնշյալ տնտեսվարող սուբյեկտները: Ուսումնասիրության ընթացքում ի հայտ են եկել մի շարք օրենսդրական բացեր, ինչի հետ կապված Հանձնաժողովը մշակել և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացրել համապատասխան առաջարկություններ մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգում լրամշակումներ կատարելու վերաբերյալ: Ուսումնասիրությունների ողջ փաթեթը փոխանցվել է Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

Անբարեխիղճ միցակցության երևույթներ բացահայտվել են ոչ միայն Երևան քաղաքում, այլ նաև մարզերում: Մասնավորապես, մարզային այցեր են կատարվել Լոռի, Արարատ, Կոտայք և Արմավիր, որտեղ հայտնաբերվել են անբարեխիղճ մրցակցության տասնյակ դեպքեր:

Հանձնաժողովի կողմից հրապարակվել են մարզերում իրականացված ստուգումների արդյունքները: Հանձնաժողովի կողմից վարույթները հարուցվել են մարզային այցելությունների ժամանակ հայտնաբերված խախտումների, մասնավորապես վաճառվող ապրանքների ոչ պատշաճ ներկայացման, ինչպես նաև մրցակցային այլ խնդիրների և օրենքի տարբեր խախտումների առնչությամբ:

Դիտանցումների ընթացքում հայտնաբերվել է կարագի անվան տակ վաճառվող բուսասերուցքային սփրեդ, անհայտ ծագման կաթնամթերք, հավկիթ, մսամթերք և այլն: Տնտեսվարողների նման վարքագիծն անբարեխիղճ մրցակցության դրսևորում է:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրավախախտ 8 ընկերությունները փոքր բիզնեսի ներկայացուցիչներ են, գործում են արտադրական փոքր ծավալներով, Հանձնաժողովի տեսադաշտում են առաջին անգամ, ինչպես նաև այն, որ նրանց հանդեպ կիրառվելիք ֆինանսական պատիժը կարող է էականորեն ազդել ընկերությունների հետագա գործունեության վրա, Հանձնաժողովի կողմից որոշվել է Օրենքի շրջանակում անհամեմատ մեղմ պատիժ կիրառել վերջիններիս նկատմամբ՝ կիրառելով նախազգուշացում:

Հանձնաժողովը հայտնաբերված խախտումների մասին ողջ տեղեկատվությունը փոխանցել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

Հանձնաժողովի կողմից «Մանգո» անվանումով առևտրի օբյեկտում իրականացված դիտանցման արդյունքում պարզվել է, որ «Մանգո» անվանումով առևտրի օբյեկտի ճակատային մասում փակցված են գովազդային վահանակներ, որոնց վրա առկա են «զեղչ ամբողջ տեսականու վրա 50%» և «զեղչ մինչև 70%» գրառումները: Սակայն պարզվել է, որ խանութում վաճառվող նոր տեսականու վրա զեղչեր չեն գործում և հետևաբար վերը նշված գրառումները կարող են մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ: Օրենքի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ խախտումը հետագայում բացառելու հանձնարարությամբ:

Հանձնաժողովը ստացել է բողոքներ, մասնավորապես «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից անբարեխիղճ մրցակցության գործողության վերաբերյալ:

Այսպես, «ԱրմենՏել» ընկերությունը, առանց տեղեկացնելու սպառողին, ինտերնետ ծառայություններից օգտվելու համար կիրառել է տարբերակված սակագին: «Ալիաս» ընկերությունը դիմում-բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ տեղեկացնելով, որ իրենց ընկերության աշխատակիցները օգտվել են «ԱրմենՏելի» «Էքսկլյուզիվ բիզնես» սակագնային փաթեթից: «ԱրմենՏելի» ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվության, ինչպես նաև տեղեկատվական բուկլետների համաձայն, այս սակագնային փաթեթով ինտերնետի մեկ ՄԲ-ի արժեքը 49 դրամ է: «Ալիաս» ընկերության աշխատակիցներն օգտվել են այս սակագնային փաթեթից, հետագայում պարզել են, որ իրենցից գանձվել է մեկ ՄԲ-ի համար ոչ թե 49 դրամ, այլ 90 դրամ: Ըստ «ԱրմենՏելի» բացատրությունների, սպառողները վճարել են ավելի բարձր սակագին, քանի որ կիրառվել է «Ինտերնետ բոլորի համար» սակագնային փաթեթը, որի մեկ ՄԲ-ն արժե 90 դրամ, իսկ «Էքսկլյուզիվ բիզնես» փաթեթի համար սպառողները պետք է հատուկ կարգավորումներ իրականացնեին: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «ԱրմենՏելը» մոլորեցրել է սպառողներին, քանի որ նրանց չի տեղեկացրել երկու սակագնային փաթեթների տարբերության մասին: Ըստ Հանձնաժողովի, «ԱրմենՏելի» վարքագիծն անբարեխիղճ մրցակցության դրսևորում է, ինչի համար ընկերության հանդեպ կիրառվել է տուգանք՝ 30 մլն դրամի չափով:

Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և միջազգային համագործակցությունը: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունն այլ երկրների մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ՝ Հանձնաժողովի և շահագրգիռ պետական այլ մարմինների մասնագետների վերապատրաստման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման և տվյալների բազայի (Գրանցումների ավտոմատ կառավարման համակարգ)ստեղծման նպատակով:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով:

Հանձնաժողովը Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), ՀՀ-ԵՄ գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ENP), Արևելյան գործընկերության, Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱ/DCFTA) ստեղծման շուրջ բանակցությունների շրջանակներում մասնակցել է բանակցային գործընթացներին, ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության կիրարկման ուղղությամբ իրականացվող վերջին զարգացումները և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում, Հանձնաժողովն անդամակցելով Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN) կազմակերպությանը, 2012 թվականի ապրիլի 17-ից 20-ը ներառյալ մասնակցել է Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած ՄՄՑ-ի 11-րդ տարեկան համաժողովին: ՄՄՑ-ին անդամակցելը և վերջինիս աշխատանքային խմբերում իրականացվող աշխատանքները հնարավորություն են ընձեռում Հանձնաժողովին անմիջականորեն մասնակցել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում ծագած խնդիրների լուծման գործընթացին, նպաստել ՀՀ մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմների և միասնական տեսակետի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային հանրությանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության ոլորտին առնչվող զարգացումներին: Համագործակցության շրջանակում ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD/ՄԱԿԱԶԿ) առաջարկով «Հայաստանի օրինակով մրցակցային քաղաքականության փորձագիտական գնահատում» թեմայով զեկույցը և Հայաստանի փորձը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը շարունակել է աջակցել Կամավոր փորձագիտական գնահատում իրականացնող ՄԱԿԱԶԿ-ի փորձագետներին Զեկույցների մշակման գործընթացում (Մոնղոլիա 2012թ.): Միաժամանակ, աշխատանքներ են իրականացվել ՄՄՑ-ի հետ համատեղ համագործակցության ուղղությունները քննարկելու և դեկտեմբերի 5-ը Մրցակցության համաշխարհային օր հռչակելու վերաբերյալ հանրությանը իրազեկելու ուղղությամբ:

Հանձնաժողովը, ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (Խորհուրդ) աշխատանքների շրջանակներում, 2012 թվականի ապրիլի 3-ից 6-ը մասնակցել է Ռուսաստանի

Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացած «Տոնական ձևավորում. Գովազդ և տեղեկատվություն» II ֆորումի շրջանակներում կազմակերպվող Խորհրդի ներքո Գովազդի կոորդինացիոն խորհրդի 8-րդ նիստին, որի ընթացքում քննարկվել են ԱՊՀ անդամ պետություններում գովազդի ոլորտի արդի խնդիրները, արտաքին գովազդի տեղադրման իրավական կարգավորման առանձնահատկությունները և այդ ոլորտին վերաբերող այլ հարցեր, ինչպես նաև առաջարկվել է «ԱՊՀ անդամ պետություններում գովազդի ոլորտի իրավիճակի վերաբերյալ» զեկույցի (Զեկույց) լրամշակման նպատակով ստեղծել Գովազդի կոորդինացիոն խորհրդի Աշխատանքային խումբ: Խորհրդի 36-րդ հերթական և Խորհրդի ներքո գործող ԱՊՀ անդամ պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի (Շտաբ) 20-րդ նիստերը 2012 թվականի հունիս ամսին կազմակերպվել են Ադրբեջանի Հանրապետության Բաքու քաղաքում , որոնց Հանձնաժողովը չի մասնակցել: Խորհրդի՝ 37-րդ և Շտաբի՝ 21-րդ հերթական նիստերը անց են կացվել 2012 թվականի նոյեմբերի 7-ից 9-ը Ուկրաինայի Կիև քաղաքում: ԱՊՀ անդամ երկրների մրցակցային մարմինների ղեկավարների մակարդակով անցկացվող նիստում քննարկվել են անդամ պետություններում մրցակցության պաշտպանությանն ուղղված աշխատանքների ընթացքը, ինչպես նաև նախորդ նիստին հաջորդած ժամանակահատվածում ԱՊՀ անդամ երկրներում հակամենաշնորհային քաղաքականության ոլորտում տեղի ունեցած առավել կարևոր իրադարձությունները: Նիստի ընթացքում ելույթով հանդես է եկել նաև Հանձանժողովի նախագահը՝ տնտեսական մրցակցության կարգավորման ոլորտում կատարված աշխատանքների և իրականացվող վարույթների ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրել է Հանձնաժողովի գործունեության վիճակագրական տվյալների մասին տեղեկատվություն: Երկկողմ համագործակցության շրջանակներում բանակցությունների արդյունքում Հանձնաժողովի և Ֆրանսիայի Հանրապետության մրցակցային մարմնի միջև 2012 թվականի մարտի 19-ին փոխըմբռնման (համագործակցության) հուշագիր է ստորագրվել, որի նպատակն է ընդլայնել մրցակցային մարմինների միջև երկկողմ հարաբերությունները, ստեղծել բարենպաստ պայմաններ տնտեսական զարգացման, տնտեսական մրցակցության քաղաքականության կիրառման համար և ձևավորել միասնական մոտեցում՝ ապահովելով մրցակցային հավասար պայմաններ՝ ֆրանսիական և հայկական ընկերությունների համար: Ֆրանսիայի Հանրապետության մրցակցային մարմնի նախագահը Հայաստանի Հանրապետություն այցի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ֆրանսիական և հայկական ընկերությունների հետ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի «Մրցակցային քաղաքականության» ներքո նախանշված պետական օժանդակության համակարգի հիմնադրման և օրենսդրության համապատասխանեցման հանձնառությունը, շարունակել է իրականացնել «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» թվինինգ ծրագիրը (Թվինինգ ծրագիր): Թվինինգ ծրագրի ԵՄ գործընկեր անդամ պետություններն են Գերմանիան և Լիտվան: Թվինինգ ծրագրի համընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում մրցակցային միջավայրի

զարգացմանը՝ ընդլայնելով Հանձնաժողովի լիազորությունները և բարելավելով մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հնարավորությունները:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Հանձնաժողովը եվրոպական փորձագետների հետ համատեղ մշակել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Օրենքների նախագծեր), որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն քննարկման: Հարկ է նշել, որ Օրենքների նախագծերում հաշվի են առնվել ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրով նախատեսված «Հակամենաշնորհային քաղաքականությանն» առնչվող պարտավորությունները: Օրենքների նախագծերի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության տարեկան միջոցառումների ծրագրով երկարաձգվել է և ներառվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության տարեկան միջոցառումների ծրագրում: Օրենքների նախագծերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 2013 թվականի դեկտեմբեր ամիսը:

Ելնելով ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրով նախատեսված պարտավորություններից՝ Թվինինգ ծրագրի շրջանակում Հանձնաժողովը եվրոպական փորջագետների հետ համատեղ մշակել է նաև «Պետական օժանդակության վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և պետական օժանդակության վերահսկմանն առնչվող չորս ենթաօրենսդրական ակտեր, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարություն քննարկման: Հաշվի առնելով պետության ներկա ռազմավարական խնդիրները և որդեգրած ներդրումային քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից նշված օրենքի նախագծի քննարկումը հաշվետու ժամանակահատվածում նպատակահարմար չի համարվել:

Պետական օժանդակության գրանցամատյանի ստեղծման նպատակով Թվինինգ ծրագրի փորձագետները Հանձնաժողովի մասնագետների հետ համատեղ մշակել են հարցաշար պետական մարմիններից պահանջվող տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով: Կարճաժամկետ փորձագետներն իրականացրել են Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին ընդունված որոշումների ուսումնասիրություն և դրա վերաբերյալ ներկայացրել են փորձագիտական զեկույց-առաջարկություններ: Իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Հանձնաժողովի աշխատակիցներն ուսումնական այցով մեկնել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին և Դրեզդեն քաղաքներ՝ ԵՄ անդամ պետության պետական օժանդակության հարցերով հաստատություններ՝ ծանոթանալու պետական օժանդակության վերահսկողության արդի գործելակերպին:

Հանձնաժողովի պաշտոնյաների, աշխատակիցների, շահագրգիռ պետական մարմինների, տնտեսական ոլորտը լուսաբանող լրագրողների մասնակցությամբ կազմակերպվել են մրցակցային օրենսդրության, պետական գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը, գերիշխող դիրքի չարաշահմանն ու պետական օժանդակության խնդիրներին առնչվող ուսուցում աշխատավայրում, կլոր սեղան ձևաչափով քննարկումներ և սեմինարներ: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում Թվինինգ ծրագրի գործողությամբ նախատեսվել և կազմակերպվել է «Մրցակցային օրենսդրության նոր իրավական զարգացումները» թեմայով սեմինար միայն ՀՀ վարչական և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանների դատավորների համար ԵՄ փորձագետների մասնակցությամբ:

Թվինինգ ծրագրի ԵՄ փորձագետների կողմից մշակվել է օդային տրանսպորտի բնագավառում մրցակցության ազդեցության գնահատման զեկույցի նախագիծը, որը նախատեսվում է ավարտել 2013 թվականի մարտ ամսին:

Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի մեկ անդամի, մամուլի քարտուղարի և ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ծրագրի շրջանակում կազմակերպվել է եռօրյա ուսումնական այց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բոնն և Բեռլին քաղաքներ: Պատվիրակությունը պաշտոնական հանդիպումներ է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության մրցակցային մարմնի՝ Բունդեսկարտելամտի նախագահի, Թվինինգ ծրագրի համղեկավարի, Գերմանիայի Էկոնոմիկայի և տեխնոլոգիայի դաշնային նախարարության պետքարտուղարի հետ: Քննարկվել են համագործակցության հետագա ընդլայնման ուղղությունները:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի պատվիրակությունը ուսումնական այցով մեկնել է Բրյուսել Մրցակցության հարցերով գլխավոր վարչություն՝ ծանոթանալու ԵՄ պետական օժանդակության քաղաքականության իրականացման փորձին և ներկայացնելու Հայաստանում մրցակցային և պետական օժանդակության քաղաքականության կիրարկման առկա իրավիճակը:

Սեմինարների կազմակերպման աշխատանքների հարցում Հանձնաժողովին աջակցել են նաև ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) երևանյան գրասենյակը և Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակը՝ սեմինարների անցկացման համար տրամադրելով համաժողովների դահլիճ:

Հանձնաժողովը, կարևորելով «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ համագործակցությունը, որը նպատակ ունի խթանել մրցակցային օրենքի և քաղաքականության, այն կիրառող մարմինների, կառավարության, ոլորտային կարգավորողների և լրագրողների կարողությունների զարգացումը, կազմակերպել է սեմինարներ ԳՄՀ-ի փորձագետների մասնակցությամբ: Սեմինարները հիմնականում վերաբերել են պետական գնումներին և գովազդի ոլորտում անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին: Այս առումով, հատկանշական է տնտեսական ոլորտը լուսաբանող լրագրողների համար Աղվերանում կազմակերպված «Անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումները, դրանց բացահայտումը, դադարեցումը և կանխարգելող միջոցառումները» թեմայով երկօրյա սեմինարը ԳՄՀ-ի փորձագետ, դատավոր Մարկուս Շնայդեռի մասնակցությամբ և«Պետական գնումներ և անբարեխիղճ մրցակցություն» թեմայով արտագնա

սեմինարը, որը կազմակերպվել է ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի հետ համատեղ: Հանձնաժողովի 2 ներկայացուցիչ մասնակցել են նաև ՀՀ ազգային ժողովում կազմակերպված «Կառավարման թափանցիկություն» հայ-գերմանական համաժողովին:

Փորձի փոխանակման և մասնագետների կարողությունների բարձրաման նպատակով, ԳՄՀ-ի աջակցությամբ Հանձնաժողովի և շահագրգիռ պետական այլ մարմինների ներկայացուցիչներ մասնակցել են մի շարք այցերի.

- Հանձնաժողովի պատվիրակությունը (3 մասնակից) 2012 թվականի փետրվարին «Մրցակցության քաղաքականության հարցերը պետական գնումների գործընթացում» ուսումնական այցով մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բոնն, Դյուսելդորֆ): Ուսումնական այցին մասնակցել են նաև ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցներ և ՀՀ վարչական դատարանի դատավորներ:Հանձնաժողովի 2 աշխատակից երկշաբաթյա այցով մեկնել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային հակամենաշնորհային մարմին (Բունդեսկարտելամտ):Հանձնաժողովի մեկ անդամ 2012 թվականի ապրիլին ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում մասնակցել է ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի ներքո Գովազդի կոորդինացիոն խորհրդի 8-րդ նիստին:
- Հ1 Հանրային հեռուստաընկերության երկու ներկայացուցչի (լրագրող և օպերատոր) մասնակցել են Հանձնաժողովի նախագահի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած գործնական այցին:

ԳՄՀ-ի աջակցությամբ հանրային քարոզչության և իրավազեկվածության բարձրացման նպատակով աշխատանքներ են տարվել գործունեությունը լուսաբանող և մրցակցային օրենսդրության որոշ դրույթներ մեկնաբանող տեսահոլովակների նկարահանման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, ԳՄՀ-ի աջակցությամբ և Հանձնաժողովի մասնակցությամբ մշակվել է պետական գնումների համակարգչային ծրագիր (Software), որի միջոցով հնարավորություն կընձեռվի ավտոմացված ձևով հայտնաբերել մրցույթի մասնակիցների կողմից կատարված այն տիպիկ սխալները, որոնք հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման գործում կարող են անհրաժեշտ պայման հանդիսանալ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Գիդո Վեսթերվելիի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2012 թվականի մարտի 16-ին կազմակերպվել է հանդիպում ԳԴՀ պատվիրակության բարձրաստիճան պաշտոնյաների և Հանձնաժողովի նախագահի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում մրցակցային իրավիճակի և ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված հարցեր:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային ուսումնական կենտրոնի (ՏՀԶԿ ՄՏԿ/OECD-GVH RCC) հետ համագործակցության արդյունքում Արևելյան, Հարավ-արևելյան և Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջաններում մրցակցային քաղաքականության կիրարկման արդյունավետության բարձրացման համագործակցության ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները

2012 թվականի ընթացքում մասնակցել են մրցակցային քաղաքականության իրականացմանը, շուկայում գերիշխող դիրքի չարաշահմանը, համակենտրոնացումներին և հակամրցակցային համաձայնություններին վերաբերող մի շարք սեմինարների և աշխատաժողովների: Սակայն, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից Հունգարիայի հետ դիվանագիտական հարաբերությունների կասեցման որոշումը՝ 2012 թվականի սեպտեմբեր ամսից Հանձնաժողովը չի մասնակցել Կենտրոնի կողմից կազմակերպված սեմինարներին:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է պետության կայուն զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք նպաստում են մրցակցային միջավայրի բարելավմանը և մրցակցային քաղաքականության կիրարկման արդյունավետ մեխանիզմների զարգացմանը: Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում շարունակել է համագործակցել Համաշխարհային բանկի հետ «Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ) երրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի թիվ ՄԶԸ Ք670-ԱՄ» վարկային ծրագրի շրջանակում «Մրցակցության քաղաքականության կարգավորիչ դաշտի հզորացում» տեխնիկական աջակցության ծրագրի ներքո:

Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցների և ՀԲ-ի փորձագետների հետ համատեղ աշխատանքներ են իրականացվել մրցակցային օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, տեղի են ունեցել մի շարք աուդիո- և վիդեո- հանդիպումներ ՀԲ փորձագետների և մրցակցային խմբի մասնագետների հետ՝ քննարկելու համատեղ մշակվող ենթաօրենսդրական ակտերի (միաձուլումների և պատասխանատվության միջոցների շեմերի վերաբերյալ) նախագծերը և մանրածախ առևտրի շուկայում իրականացվող ուսումնասիրության արդյունքները:

Ծրագրի շրջանակում իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, մասնավորապես հանդիպումներ են կայացել ՀԲ-ի հայաստանյան առաքելության պատվիրակության ներկայացուցիչների հետ, որի ժամանակ քննարկվել են նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքները և ծագած խնդիրները, ինչպես նաև 2012 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունները, հստակեցվել են հետագա համագործակցության համատեղ ծրագրի մշակման վերաբերյալ ուղղությունները:

Հանձնաժողովի նախագահը հանդիպում է ունեցել ՀԲ-ի ֆինանսական և բանկային համակարգին առնչվող հարցերով խորհրդականի հետ, որի ընթացքումքննարկվել են 2012 թվականին Հանձնաժողովի և ՀԲ-ի միջև ֆինանսական շուկաների և ավիացիայի ոլորտներում համագործակցության ուղղությունները և առկա խնդիրները: ՀԲ-ի ֆինանսական մասնագետներն առաջարկել են օժանդակել Հանձնաժողովին ֆինանսական շուկաներում կարճաժամկետ և երկարաժամկետ ուսուցման հարցում, նպաստել ՀՀ Կենտրոնական բանկի և Հանձնաժողովի միջև համագործակցության ընդլայնմանը: Փորձագետները նախատեսում են վերոնշյալ առաջարկություններն ընդգրկել ՀՀ-ում իրականացվող համատեղ նոր ծրագրերի առաջարկության հաշվետվության մեջ:

Համաշխարհային բանկի «Հարավ-հարավ» փորձի փոխանակման հավատարմագրային հիմնադրամի («South-South» Experience Exchange Trust Fund) ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակազմի 2 աշխատակից 2012

թվականի հուլիս ամսին գործուղվել են Հունգարիայի և Ռումինիայի մրցակցային մարմիններ՝ փորձի փոխանակման նպատակով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆՄԶԳ/USAID) համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը բանակցություններ է վարել համատեղ գործողությունների ծրագրի մշակման և տեխնիկական աջակցության տրամադրման ուղղությամբ: Մասնավորապես, բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում մշակված տեղեկատվական տվյալների բազայի հայեցակարգի համաձայն՝ Հանձնաժողովում նոր տեղեկատվական համակարգի ներդրմանն աջակցելու հարցում: Այդ կապակցությամբ Հանձնաժողով է այցելել նոր տեղեկատվական համակարգը մշակող միջազգային փորձագետը: Փորձագետը ներկայացրել է «Գրանցումների ավտոմատացված կառավարման համակարգ»-ի շահագործման կարգը, անցկացրել է խմբային ուսուցում և թեստավորում՝ համակարգի ներդրման աշխատանքների բարելավման համար: Վերոնշյալ համակարգի շահագործման նպատակով ԱՄՆՄԶԳ-ի աջակցությամբ Հանձնաժողովի համար ձեռք է բերվել անհրաժեշտ համակարգչային տեխնիկա, աշխատանքներ են տարվել դրանց տեղադրման և համակարգի ներդման ուղղությամբ:

Հանդիպում է կազմակերպվել ԱՄՆՄԶԳ հայաստանյան առաքելության և ծրագրերի ղեկավարների հետ: Քննարկվել են ԱՄՆՄԶԳ-ի և Հանձնաժողովի միջև համագործակցության ուղղությունները և առկա խնդիրները: Հանձնաժողովին առաջարկվել է օժանդակել գործարարների շրջանում հարցումներ, Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների կարճաժամկետ և երկարաժամկետ ուսուցման ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ (հեռուստատեսությամբ հասարակական գովազդներ և հաղորդումներ) կազմակերպելու հարցում:

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է նաև ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի (այսուհետ՝ ՁՁՇՄ ծրագիր) հետ, որի շրջանակում Հանձնաժողովի մասնագետների հետ քննարկվել են ՁՁՇՄ ծրագրի կողմից մշակված «Գնումների գործընթացում փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցության խթանումը» ուսումնասիրության արդյունքները: ՁՁՇՄ ծրագրի աջակցությամբ կազմակերպվել են նաև մի շարք միջոցառումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել ՁԼՄ ներկայացուցիչների և բիզնես հանրության իրազեկվածության մակարդակը, մասնավորապես.

- 2012 թվականի հոկտեմբերին Ծաղկաձորում կայացել է Հանձնաժողովին կից ստեղծված տնտեսական մրցակցության հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական՝ երրորդ ընդլայնված նիստը: Խորհրդի նիստի ընթացքում քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներին վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև ՁՁՇՄ ծրագրի փորձագետների կողմից դեղերի շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքները:
- 2012 թվականի նոյեմբերին կազմակերպվել է «Պետական գնումներ և անբարեխիղճ մրցակցությունը» թեմայով արտագնա սեմինար լրագրողների համար: Սեմինարին մասնակցել են հեռուստաընկերությունների, լրատվական կայքերի, այլ լրատվական միջոցների լրագրողներ, Հանձնաժողովի, պետական և մասնավոր ոլորտների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների

ներկայացուցիչներ: Սեմինարի ընթացքում ԵՄ փորձագետ, Համբուրգի երկրամասային դատարանի նախագահող դատավոր Մարկուս Շնայդերը ներկայացրել է անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին վերաբերող հարցեր, մասնավորապես շուկայում հենական ապրանքների շրջանառության ազդեցությունը մրցակցության վրա, իսկ Հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրել են կեղծ ապրանքների արտադրության վերաբերյալ իրականացված վարույթները և գնումների գործընթացում բացահայտված գործերը: Մի շարք լրատվամիջոցներ մեկնաբանել են սեմինարի ընթացքում բարձրացված հարցերը և դրանց լուծման հնարավոր ուղիները:

- Հանձնաժողովի աշխատակիցների համար կազմակերպվել է «Գերիշխող դիրքի չարաշահման, ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշման մասին» թեմայով ուսուցում աշխատավայրում ձևաչափով քննարկումներ մրցակցության հարցերով փորձագետի մասնակցությամբ:

ՁՀՇՄ նոր ղեկավարների և փորձագետի հետ քննարկվել են նաև ծրագրի և Հանձնաժողովի միջև 2013 թվականի հետագա համագործակցության ուղղությունները:

ԱՄՆ ՄՋԳ տնտեսական զարգացման դեպարտամենտի ղեկավարի և Հանձնաժողովի նախագահի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են 2013 թվականի համագործակցության հիմնական ուղղությունները: Մասնավորապես 2013 թվականի մարտից նախատեսվում է իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համատեղ ծրագիր, ինչը կնպաստի ԱՄՆ դաշնային առևտրի հանձնաժողովի հետ համագործակցության ընդլայնմանը: Տվյալ ծրագրի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով 2012 թվականի նոյեմբերին Երևան են ժամանել ԱՄՆ ՄՋԳ փորձագետ, ԱՄՆ դաշնային առևտրի հանձնաժողովի միջազգային համագործակցության դեպարտամենտի տնօրենի տեղակալ պարոն Ռասսել Դամթոֆթը և ԱՄՆ դաշնային առևտրի հանձնաժողովի հակամրցակցային հետազոտությունների և սպառողների շահերի պաշտպանության օրենքի կիրառման գծով փաստաբան Սթյուարտ Հիրշֆելդը: Նախատեսվող ծրագրային ուղղությունները հստակեցնելու և համապատասխան առաջարկներ ձևավորելու համար կազմակերպվել են մի շարք հանդիպումներ Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների, ինչպես նաև տնտեսական մրցակցության բնագավառում գործունեություն իրականացնող շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հանձնաժողովի ներկայացուցիչները 2012 թվականի մարտի 29-ին հանդիպել են Եվրոպական էներգետիկ համայնքի (ԵԷՀ) քարտուղար՝ Ս. Նեյկովի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպման ընթացքում ԵԷՀ-ի քարտուղարը տեղեկություններ է ներկայացրել Էներգետիկ համայնքի և դրան Հայաստանի անդամակցության գործընթացի վերաբերյալ: Առաջարկվել է Հանձնաժողովին անդամակցել ԵԷՀ-ին և ներգրավել Էներգետիկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին: Հանձնաաժողովի մեկ ներկայացուցիչ2012 թվականի նոյեմբերին Ավստրիայի Վիեննա քաղաքում մասնակցել է «Մրցակցությունն էներգետիկ համայնքում» թեմայով սեմինարին:

Հաշվետու ժամանակահատվածում հանդիպում է տեղի ունեցել նաև Միջազգային արժույթի հիմնադրամի (ՄԱՀ/IMF) Վաշինգտոնի առաքելության ղեկավարի, ՄԱՀ հայաստանյան գրասենյակի ղեկավարի և ավագ տնտեսագետի հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հանձնաժողովի կողմից իրականացված գործերի վիճակագրական տվյալներ, քննարկվել են նաև պետական գնումներին առնչվող խնդիրներ, որոնք հետաքրքրել են ՄԱՀ ներկայացուցիչներին տվյալ ոլորտում հետագա համագործակցության տեսանկյունից:

Հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) համագործակցության շրջանակում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպվող միջազգային սեմինարներին, քննարկումներին և այլ միջոցառումներին:

3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը.

Հանձնաժողովը ԵՄ Թվինինգ ծրագրի փորձագետների աջակցությամբ մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծեր և ներկայացրել է դրանք ՀՀ կառավարության քննարկմանը:

Ի թիվս մի շարք խնդիրների, օրենքների նախագծերով լուծում է տրվում հետևյալ հարցերին, որոնք մեծապես կբարձրացնեն Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը.

1. Հանձնաժողովի ներկա խնդիրներից է տնտեսվարող սուբյեկտների կողմից տուգանքի վճարման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Այսպես, հաճախ տնտեսվարող սուբյեկտները Հանձնաժողովի՝ տուգանք նշանակելու մասին որոշումը բողոքարկում են վարչական կամ դատական կարգով և խուսափում են սահմանված ժամկետում տուգանքի վճարումից, անհարկի ձգձգում են որոշման կատարումը, երբեմն էլ ուղղակի չեն վճարում նշանակված տուգանքը՝ անգամ չբողոքարկելով որոշումը: Մինչդեռ Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը), սակայն նշված դրույթը կիրառության տեսակետից արդյունավետ չէ:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Եվրոպական միության մի շարք երկրների, այդ թվում՝ Գերմանիայի, Լիտվայի, Իտալիայի փորձը մրցակցային մարմինների կողմից նշանակվող տուգանքների գանձման մեխանիզմների կապակցությամբ: Հաշվի առնելով միջազգային փորձը և տուգանքների վճարման առավել արդյունավետ մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությունը՝ փոփոխություն է կատարվել Օրենքի 35-րդ հոդվածում և Հանձնաժողովի որոշումների կատարման արդյունավետության երաշխիք հանդիսացող՝ Հանձնաժողովի կողմից կայացրած որոշման կատարման անկասելիության դրույթին զուգահեռ մեկ այլ մեխանիզմ է մշակվել, այն է՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքը չվճարելու դեպքում տույժի նշանակում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքի չվճարված մասի 0,1 տոկոսի չափով:

2. Փոփոխություն է նախատեսվում նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքում: Ակնհայտ է, որ գնումների գործընթացի արդյունավետության համար առանցքային նշանակություն ունեն մրցակցության գործընթացի կազմակերպման հարցերը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով միջազգային փորձը՝ նպատակահարմար է գնումների գործընթացի վերահսկողությունն իրականացնել լիազոր մարմնի կողմից, իսկ գնումների գործընթացի վերանայման հետ կապված հարցերի քննարկումը վերապահել մրցակցության ոլորտում մասնագիտացված անկախ պետական մարմնին՝ գնումների գործընթացի վերահսկման և վերանայման գործընթացներում բազմակարծություն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով Գերմանիայի, Ուկրաինայի և մի շարք այլ երկրների փորձը՝ գնումների գործընթացի վերանայման ընթացակարգի վերաբերյալ՝ փոփոխություններ են նախագծվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, գնումների ընթացակարգի վերանայման համար պատասխանատու մարմին է

սահմանվել Հանձնաժողովը, հստակեցվել են վերանայման գործընթացի առանձնահատկությունները, վերանայման արդյունքում Հանձնաժողովի կողմից կայացվող որոշումները և դրանց հետևանքները, ստեղծվել են գործուն մեխանիզմներ գնումների գործընթացում խախտումների բացահայտման և վերացման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

3. Ներկայումս Հանձնաժողովն օժտված չէ բավարար վերահսկողական լիազորություններով: Մասնավորապես, Հանձնաժողովը ստուգումներ իրականացնելիս իրավասու չէ կատարել խուզարկություններ, առգրավումներ, տնտեսվարող սուբյեկտից վերցնել տեսագրություններ, ձայնագրություններ, տեղեկատվության էլեկտրոնային և այլ կրիչներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին, տնտեսվարող սուբյեկտի ցանկացած ներկայացուցչից պահանջել գործի փաստերի և (կամ) փաստաթղթերի վերաբերյալ բացատրություններ և գրավոր ամրագրել դրանք, կատարել մի շարք այլ գործողություններ: Մինչդեռ միջազգային փորձի վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ առանց նշված լիազորությունների հնարավոր չէ բացահայտել տնտեսական մրցակցության ոլորտի խախտումների մեծ մասը, քանի որ դրանք իրենց բնույթով գաղտնի են, իսկ դրանց բացահայտման գործընթացն առանց համապատասխան վերահսկողական լիազորությունների հնարավոր չէ:

«Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով Հանձնաժողովին տրվել են մի շարք լիազորություններ, որոնք ուղղված են Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ փաստական հանգամանքներ ձեռք բերելու, դրանք ամրագրելու և որպես ապացույց օգտագործելու տեսանկյունից:

4. Գործող Օրենքով սահմանված տուգանքի չափերը միասնական չեն և չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, մի դեպքում տուգանքի չափը որոշվում է կոնկրետ դրամային արտահայտությամբ, իսկ մյուս դեպքում կախված է տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթից, որոշակի տոկոսով: Հետևաբար, տվյալ դեպքում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են տարբեր մոտեցումներ՝ կախված այն հանգամանքից, թե սուբյեկտը մրցակցային օրենսդրության ինչ խախտում է թույլ տվել: Մասնավորապես, նախորդ տարում առավել փոքր հասույթ ունեցող սուբյեկտները հայտնվում են բարվոք վիճակում հասույթով որոշվող իրավախախտումների համար պատասխանատվության կիրառման դեպքում, իսկ խոշոր հասույթ ունեցողները՝ կոնկրետ դրամային արտահայտությամբ տուգանքների կիրառման դեպքում:

Օրենքի նախագծով սահմանվում է տուգանքների որոշման միասնական մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից, ինչպես նաև տուգանքի չափերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2012 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2012 թվականի բյուջեով, որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 243802.2 հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի Անվանումը	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Դրամարկղային ծախս
Ընթացիկ ծախսեր	**243802,2**	**243801,14**
-Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ	185166,4	185166,4
-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	6866,7	6866,7
-Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	22056,3	22056,3
-Էներգետիկ ծառայություններ	4594,9	4594,9
-Կոմունալ ծառայություններ	221,7	221,7
-Կապի ծառայություններ	6346,9	6346,9
-Ապահովագրական ծախսեր	195,0	195,0
-Ներքին գործուղումներ	2749,1	2749,1
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4317,2	4317,2
-Տեղեկատվական ծառայություններ	674,8	674,8
-Ներկայացուցչական ծախսեր	500,0	500
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1684,2	1684,2
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	1848,6	1848,6
-Գրասենյակային նյութեր և հագուստ	1254,1	1254,1
-Տրանսպորտային նյութեր	4865,9	4864,84
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	137,1	137,1
-Հատուկ նպատակային այլ նյութեր	253,0	253,0
-Այլ հարկեր	0,0	0,0
-Պարտադիր վճարներ	70,3	70,3